«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 **սեպտեմբերի** 2018 **թվականի**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 **թթ. զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծը քննարկելու և հաստատելու մասին**

Ղեկավարվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետի 2-րդ ենթակետով, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի աշխատակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով համալսարանի գիտական խորհրդի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի նիստի որոշումը, լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծը քննարկելու և հաստատելու մասին» համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանի զեկուցումը՝ համալսարանի խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. **Հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի** 2018-2022 **թթ. զարգացման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը**:

2. **Հանձնարարել համալսարանի ռեկտորին՝**

   Իրականացնել ռազմավարությունից բխող հետևյալ անմիջական քայլերը.

   1) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի իրագործման կառուցակարգերի և ներքին նորմատիվային փաստաթղթերի մշակման, գործընթացների մշտադիտարկման և արդյունքների ընթացիկ

գնահատման ու հաշվետվությունների կազմման նպատակով ձևավորել աշխատանքային խումբ և հատկացնել ռեսուրսներ,

2) ամբիոնի վարիչի և ֆակուլտետի դեկանի անընդմեջ պաշտոնավարման ժամկետը սահմանափակել 10 տարով՝ ներառյալ ժամանակավոր պաշտոնավարման ժամանակը,

3) ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստիքը լուծարել և ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի հաստիքը վերանվանել «Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր»,

4) գիտահետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության բարձրացման նպատակով լուծարել գործող գիտաուսումնական լաբորատորիաները՝ այդ գործառույթը ներառելով «Ամբերդ» հետազոտական կենտրոնում որպես հետազոտական ուղղություններ. այդ ուղղություններում միջազգայնորեն ընդունված կարգով դասախոսական կազմի հնարավոր լայն շրջանակի պարբերական և ռոտացիոն կարգով ներգրավելու համար մինչև դեկտեմբերի 1-ը մշակել և խորհրդին ներկայացնել հետազոտական կենտրոն-ամբիոններ կապի կազմակերպման արդյունավետ կառուցակարգի նախագիծ՝ կարևորելով մրցակցայնությունն ու փոխատեղելիությունը,

5) մինչև դեկտեմբերի 1-ը ներկայացնել 11000 ժամից պակաս բեռնվածության ծավալ ունեցող (15 հաստիք) բոլոր ամբիոնների խոշորացման կամ միավորման մասին խորհրդի որոշման նախագիծ:

Խորհրդի նախագահ՝ **Վաչե Գաբրիելյան**

2018 թ. Սեպտեմբերի 25
Երևան